

ՀԻՆ ԲԺՇԿԱՐԱՆ

445

ԲԺՇԿԱՐԱՆ ԳԱԳԻԿ - ՀԵԹՈՒՄԵԱՆ

ԿԱՐԵԻՈՐ ԲԱՌԵՐ ԵՒ ԱՆՈՆՑ ՄԵԿՆՈՒԹԻՒՆԸ

ՅԱՌԱՋԱԲԱՆԻ ՏԵՂ

Փափաքելով յարգանքի և երախտագիտութեան մեր տուրքը հատուցանել Ս.մասիացի մեծ բժշկապետ Ս.Ժիրտովլաթի՝ իր ծննդեան հինգհարիւրամեակի տօնախմբութեան առթիւ և կերպով մը մասնակցիլ աւնոր յիշատակին անմահութեան, ուզեցինք մեր և մեծ Ս.մասիացւոյն Նախնեաց Հայ բժշկական գործերէն հնագոյնին՝ Հիւս ԲԺԼԵ-ԿԱՐԱՆԻՆ կարեւոր բառերը հրատարակել մեկնուած ու բացատրուած, ղիտում ունենալով քաջալերել Հայ բժշկութեան ուսանողներն և ուսումնասէնրը և ընդհանուր Հայ մշակոյթի զարգացման նախանձախնդիր հոգիները¹։

«ՀԻՆ ԲԺՇԿԱՄԱՆ»² տիտղոսին տակ կը հրատարակենք բառերը այն բժշկարանին,

1. Անշուշտ Ամերտովաթի յորեկեանին առթիւ ընթերցողներուն աւելի փափաքելի պիտի ըլլար նոյն ինքն մեծ բժշկապետին գործերէն մէկը հրատարակուած տեսնել. սակայն այդ օգտակար եւ մեծապէս դժուարին գործը արդէն արդիւնաւոր կերպով սկսուած է եւ յոգործեամբ ալ յառաջացած Հայ բանասիրութեան վաստակաւոր մշակի՝ Տիար Կարապետ Յ. Բաամաջեանի կողմէ:

Իհն՝ Կարմիր

Միւս կողմէն փստահ ենք թէ «Հին Բժշկարանը» որ
կերպով մը Ամերիկուլիթի գործին նախաձայրը կ'ընայ
համաբուիլ՝ մեծ օգնութիւն պիտի մատուցանէ թէ՛ այդ
գործին և թէ ընդհանուր Հայ բժշկական բառերու ու
ստանաակրութեան և զարգացման: Այս տեսակէտն է հա
որ կ'արդարացնէ կը յուսանք մեր ձեռնարկն և հաճելի
կ'անցնի թերթիս յարգելի ընթերցողներուն:

Զ. Յ. Բ.

2. Հ. Գեւորդ Աւիշան եր «Հայրենասակ»ին մէջ սոյն

որուն ձեռագիրը կը գտնուի վանքիս Հայ-
կական գրչագիրներու մատենադարանին
մէջ՝ 1281 թուահամարով:

Այս «Հին» կամ «Գաղիկ - Հեթումեան» բժշկարանին վրայ արդէն բաւական խօսուած է, և անկից երկար հատուածներ և բուսաբաներ հրատարակուած են³. Հետեւաբար, ան արդէն ծանօթ ըլլալով Հայ գիտական աշխարհին, մենք կը բաւականանք հոս տալու անոր համառօտ նկարագիրը՝ յարակից անհրաժեշտ տեղեկուծիւններով:

Բժշկարանիս թիւն է 1281. Մեծոքիւն՝
 $20 \times 15 \times 5$. Գրոշքիւն՝ միասիւն . Տոդ՝
 25-27. Էջ՝ 396. Նիշք՝ մագաղաթ. Գիր՝
 բոլորգիր, գիւրընթեռնըլի. Հանգամանք՝
 լաւ. երկու բամբակեայ թուղթեր աւելցուած

գործը կը յիշէ «Հիմ Բժշկարան» անունով, ինչ որ մինքն աւելի որդեգրենք թէ՛ անուան համառոտութեան (քան թէ օր. Բժշկարան Գաղիկ - Հիթումեան) անունը), թէ՛ իր հնութիւնը աւելի յայտնի ցուցնելուն և թէ վերջապէս Հ. Աւելանի և մեր մեկնութիւններուն համեմատութիւնը աւելի դիւրացնելու համար,

3. Հմտ. գրածները Հ. Արսէն Սուքրեանի (Բագմալեւ, 1881, էջ 3), Հ. Ղեւոնդ Բոլորեանների (Հետազոտութիւնք Նախնեաց Ռամկօրէնի վրայ. մասն Ա. տետր Ա. էջ 29), Հ. Ղ. Աւելանի (Սիսուան, էջ 337. - Իսկ Հայրուսակին մէջ բժշկարանիս բուսաբանքը). Հ. Գարեգին Զարբհանալեան (Մատենադարան Հայկական Թարգմանութեանց նախնեաց 1889, էջ 761). ՏԵԹ. Վ. Թորգոման (Բագմալեւ, 1923, էջ 7-11, 39-43, 69-71 հանդերձ հատակոտորներով):

են վրան) և քանի մը տեղ եղծուած. Ուշ-
ղագրութիւն՝ ունի բաւական թերիներ.
Հնչին և անկարեւոր սխալներն ուղղեցինք,
իսկ կարեւոր փոփոխութիւնները նշանակե-
ցինք: Ժամանակ գրութեան՝ (Ա. մասին)
«Ի Ժամանակս յաղթող Թագաւորին Հայոց
Գաղկայ» (Էջ 15). Գրիչ՝ «Յերունի Վարդ
Մրտիչի. սկիզբնս ի թու հայոց. ԶԽԳ.
(1294) յամսեան յունւարի ի Իւ-ն»: Ստա-
ցող՝ Հեթում Տէր Կոռիկոսի:

Յիշատակարաններն երեք են, որոնցմէ հոս
կը դնենք երկու կարեւորները. առաջինը
ժամանակի և պարագաներու տեսակէտով,
երկրորդը սիրուն իր սրտառուչ և բարեպաշ-
տիկ աղօթքով.

Զեռագաւորագն այր՝ զՔրիստոսսպաշտ
խոհեմ եւ քաջիարանց պարոն, զբարեհամ-
բաւն Հեմում, տէր կոռիկոսոյ յիշեսցիք ի
Քրիստոս՝ որ Քրիստոսի էք վիճակեալք,
որոյ հրամանաւ սկիզբն արարի գրուեան
յոքնահանճար եւ յամենայնի պիտանացու
եւ հարկաւոր տառիս բժշկարանի՝ եւ ա-
պիկար ճերուհիս վարդ Մըտիշցի:

Սկիզբնա, ի թու հայոց. ԶԻԳ. յամսեանն
յունաւարի ի իւն:

Որ բարձեր զցաւս հոգւոց եւ մարմնոց
հաւատացելոց քոց Քրիստոս Աստուած՝
բժշկեա զհոգւոյ եւ զմարմնոյ հիւանդու-
թիւնն ճառայի քո Հեծմոյ տեառն կօրկօ-
սոյ ստացողի բժշկարանիս եւ պահեա զնա
իւրովքն ամենեքումք, անխորժ կրկին կեն-
դանութեամբք կենդանովն եւ անկենդա-
նեաւն զերկաքանչիւրսն ըստ քումդ հա-
ճոյից կառավարելոյ զի մնալով նշխար՝

1. Առանց նկատելու առջևի (էջ 1-12) մարդակա-
մութեան վրայ խօսող հատուածը:

2. Իսկ ՅԶԳԴԻ ԷՂԻՆ ՎՐԱՅ ԿԸ զԳՆՈՒՐ ԵՐԱՅ ԵՂԻՆ
ՆԱԳԻՐԸ ԲԺՀԿԱՐԱՆԻՍՅԸ՝

3. Գործիւս ընթացքին, երբ բժշկարարական
բէն բառեր կամ վկայութիւններ մէջ կը բերենք փա-
կազօր մէջ, անոնց քով կը ղնենք էջին հետ միասին՝

4. Թէպէտ բժշկարանը պարզաբար գազիկ թագաւո

յաւրհնեալ նախապետէն աւրհնաժառանգ
ԹՈՐՆ՝ անփոփոխելի ունելլով իւրայօքն ըստ
աբրամովու ի փառս քո ընդ հաւր եւ սուրբ
նոգւողն աւհնեալդ յաւիտեան (Էջ 229):

Այս 396 էջնոց բժշկարանը երեք զանա-
զան գործեր կը պարունակէ¹։

Ա. Մասը. Յաղթող Գազիկ թագաւո-
րին օրով թարգմանուած թշկարանն է (էջ
13-147):

Բ.Ը, Մխիթար Հերացիին «Զերմանց
Մխիթարութեան» մէկ մասն է (էջ 148-229):

Գ.ը, այլ և այլ ախտերը բժշկելու՝ ընդարձակ գեղաբանութիւն մ'է (էջ 230-395)² :

Մեր հրատարակած բառերը կը պատկանին բժշկարանին միայն Ա. մասին³ որ թարգմանուած է «ի տաճիկ լեզուէ ի հայո ի ժամանակս յաղթող թագաւորին Գագկայ [Ս. ռաջնոյ]»⁴ (989-1019). ուստի Ժ-ԺԱ. դարու գործ մ'ըլլալով, անոր Հայերէն բառերուն արժէքն ալ (գէթ մեծագոյն մասին, մանաւանդ բուսաբանականին) շատ աւելի բարձր է քան մեզի ծանօթ միւս բոլոր ազգային բժշկարաններուն բառերը:

Թէպէտ մեր ձեռքը գտնուած այս բժշկա-
րանը բուն հեղինակին նախնական ձեռագի-
րը չէ այլ Ժ.Գ. դարու գրչութիւն, սակայն
ընդմիջեայ երեք դարերը բժշկարանիս բա-
ռերուն վրայ ընդհանրապէս ազդու հետք մը
չեն թողած :

Աւելորդ կը համարենք «Հին բժշկարան»ի բաւերոշն կարեւորութեան մասին երկար խօսիլ, քանի որ հրատարակութեանս առաջին էջէն իսկ ակնյայտնի կը տեսնուի անոնց կատարելիք որոշ դերը մեր ազգային բառագանձին վրայ:

Երևանում կը յիշէ, սակայն ինչպէս յայտնի է յա-
րակից պարագաներէն, և Հ. Ա. Առքրեան (Բազ-
մազէպ 1881, էջ 33.) ու Հ. Գ. Յոշնանեան (Հետա-
գոտութիւնք. մասն Ա. Տետր Ա. էջ 135) եւս կը հաս-
տատեն, այս թագաւորը մեր շինարար և արաբներէն
«Շահնշահ» տիպոսը աւելոյ Գաղիկ Ասալիմէն է որուն
ժամանակ այս բժշկարանը թարգմանուած է «Ի տաճիկ
լեզուէ», այսինքն արաբերէնէ:

Բ Ժ Շ Կ Ա Ր Ա Ն

ՋՈՐ ՓՈԽԱԾ Է Ի ՏԱՃԻԿ ԼԵՋՈՒԷ Ի ՀԱՅՍ
Ի ԺԱՄԱՆԱԿՍ ՅԱՂԹՈՂ ԹԱԳԱՒՈՐԻՆ ՀԱՅՈՑ ԳԱԳԱՍՑ

ԳԼՈՒԽ¹ Ա.

ՎԱՍՆ ԵՐԱԿ ՃԱՆԱԶԵԼՈՅ²

Այս գլխուն մէջ (էջ 15-18) Հին բժշկարանը երակի տեսակներուն վրայ կը խօսի. վատուած, ուռնով, երկայն, կարճ, լայն, ահաւոր, սուր, բոյլ, շորի, փոխոյն և

1. ՄԿԱՆ ԱԳԻ

Երակի անուն՝ որուն չենք հանդիպած մինչեւ հիմա հրատարակուած հայ բժշկարաններուն մէջ: Չայս պէտք է շփոթել համանուն «Մկան ագի» բանջարին հետ, որ է լատ. *Myosurus minimus* L. որուն վրայ ուրիշ տեղ առանձին կը խօսի բժշկարանս. իսկ հոս այս երակին համար կը գրէ «ապա թէ հետէ՝ երակն (հիւանդին) բարկնա և վատուած՝ այտոր մկան ագի ասեն. և այս ցեղ երակը յայնժամ լինի եփ [=երբ] ցան ի յաղթել լինի և զուժն տանել և ի հատցնել» (էջ 17). և զարձեալ՝ «թէ երակն քան զմկան ագի բարակ լինի՝ ուժն (հիւանդին) ի հատնել է. ապա թէ քան զմկան ագի հաստ է ոմեկ՝ կայ հիւանդին» (էջ 18): Ըստ այսմ Մկան ագի կը կոչուի բազկերակին զարկը՝ որ հետզհետէ կը տկարանայ. ֆր. *pouls myure*:

2. ԱԼԵԽԱՌՆ

Բժշկարանս մարդը չորս հասակի կը բաժնէ. մանուկ, տղայ, աղետոր և ալեխառն: Առաջին երեքը ծանօթ անուններ են, բայց վերջինին՝ նախնեաց ուրիշ գործ

1. «Գրութի» բառը մենք դրած ենք. բժշկարանը պարզաբար «Ա. - Բ.» ով կը բաժնէ գլուխները:
2. Այս վերնագիրը թէպէտ հոս մոռցուած է բնագրին

ծերուն մէջ չենք հանդիպած: Գեղեցիկ բառ մ'է «հասակը առած» մարդը բնորոշելու համար. «Եւ ալեւոր մարդոյն երակն և ալեխառն մարդոյն չլինի մէկ. զի ալեխառն մարդոյն երակն զեղ մանկան լինի. և ալեւորին երակն՝ զեղ տղայի լինի» (էջ 16):

3. ՅԱՆԳԱՀ. ՅԱՆԳԱՀԱՅՆԵԼ

Հետաքրքրական բառ մըն է ասիկա որուն մինչեւ հիմայ տարակուսական կամ սխալ մեկնութիւն տրուած է:

Հայկազեան Բառարանը այս բառին միայն մէկ ձեւն ունի՝ զոր այսպէս կը մեկնէ. «Յանգահացեալ թուի անողացեալ. Պիտ[ոյից գիրք]. կամ մանաւանդ ցյանգ այսինքն իսպառ ահացեալ, երկուտ.» : Նոյնպէս կը գրէ նաեւ Աճառեան «Յանգահանալ. անստոյգ բառ որ մէկ անգամ ունի Պիտ[ոյից գիրք]... թուի ուղղելի անողացեալ» Արմատ. բառ. Դ. 1240:

Այժմ տեսնենք թէ ինչ իմաստով կը գործածուի այս բառը Հին բժշկարանի մէջ, երբ կ'ըսէ. (ա) «Տղային երակն կարի՝ յանգահ լինի ու գիճային ու վատուած և մանկան երակն՝ սուր լինի, չոր և ուժով» (էջ 16): Դարձեալ (բ) «Եւ տաք կերակուրն և տաք դեղերն զերակն սրացնէ և թէ հով լինի դեղերն և կերակուրն՝ զերակն վատուցնեն և յանգահացնեն» (էջ 17): Այս վկայութեանց վրայ կրնանք աւելցնել նաեւ Մխիթար Հերացիի խօսքերը. (գ) «Եւ յորժամ ջերմն յանգահի ի բաղանիս մտէ (հիւանդն)» (էջ 26). և զար-

մէջ, սակայն ցանկին մէջ կը յիշուի:
3. «Ամեկ» բառին համար՝ տե՛ս Թիւ 9.

ձեալ. (դ) «Այլ պատեհ է որ ի գամէ և յանգահ բժշկեն զայդ ջերմը... և չշտապեն ի յիւր բժշկութիւնն»: Մխիթ. Հեր. էջ 95:

Ինչպէս յայտնի կը տեսնէ ընթերցողը, եթէ վերոյիշեալ մեկնութեանց համեմատ յանգահ բառը «անհոգ կամ երկչոտ» թարգմանենք, բժշկարաններու վկայութիւնները մութ, երկղիմի և երբեմն հակասական իմաստ պիտի առնեն. ինչպէս օր. Մխիթ. Հեր. իր այս վերջին խօսքերովը հրամայած պիտի ըլլար որ Հիւանդը անհոգութեամբ բժշկեն(!): Հետեւաբար իրրեւ անյարմար կը թողունք վերոյիշեալ մեկնութիւնը:

Սակայն բառիս ստոյգ իմաստը գտնել զժողովին պիտի չըլլայ՝ եթէ վերոյիշեալ վկայութիւնները ուշադրութեամբ քննենք. ստուգիւ բժշկարաններու այդ խօսքերուն մէջ յանգահ և յանգահի կը գործածուին իրրեւ հակառիշ «Սուր, սրացնել, շտապել» բառերուն. (հմտ. ա. վկայութիւնը՝ ուր «յանգահ, գիճային, վատուած» բառերը դրուած են իրրեւ հակառիշ «Սուր, չոր, ուժով»-ին. զարձեալ ք. վկայութեան մէջ կ'ըսուի «տաք կերակուրն սրացնէ... հով... կերակուրն... յանգահացնեն» իսկ դ. վկայ. «յանգահ բժշկեն... չշտապեն»): Հետեւաբար տարակոյս չի մնար թէ վերոյիշեալ բառերուն հակառակ՝ յանգահ պիտի նշանակէ՝ մեղմ, հանդարտ, զանգուշ: Այս իմաստը աւելի եւս կը հաստատուի Հին բժշկարանի «Սուր երակի մասին տուած սահմանովը. Սուր կ'անուանէ նա երակ մը՝ որ «մեղմ չլինի և շատ խաղայ¹». ուստի Սուր-ին հակառիշ՝ յանգահ, պիտի սահմանուի՝ Երակ մը որ մեղմ լինի և սաւալաւ խաղայ. որ է մեղմ, հանդարտ զանգուշ (երակ մը):

Ինչպէս տեսանք Աճառեան «Յանգահա-

ցեալ» բառը ուղղելի կը համարի «անհոգացեալ». իսկ Հայկազ. կ'ուզէ զայն յանգ + ահ բառերով ստուգաբանել:

Մեր կարծիքով «Յանգահի» (Մխիթ. Հեր.), «Յանգահացնել» (Հին Բժշկ.), «Յանգահացեալ» (Գիրք Պիտոյից) բառերուն արմատը նոյն է՝ յանգահ, որ ձեւացած է Պրս. օհ կահ «ժամանակ» և Հայ. յ նախդիրով և ահ ժխտականով այսպէս. յ + ահ + գահ (հմտ. յանկարծ = յ + ահ + կարծ). որով յան գահ որ և անգահ (կամ ըստ Մխիթ. Հեր. «անկահ») բառին նախնական իմաստն է «անժամանակ, ժամանակէ դուրս, ուշ» որ հետզհետէ առած է «դանդաղ, հանդարտ, մեղմ» մեծաւոր նշանակութիւնը:

Արդէն վերեւ մեր բժշկարաններուն վկայութեանց մէջ տեսանք յանգահ բառին՝ առաւելապէս վերջին «հանդարտ, մեղմ» իմաստով գործածութիւնը. իսկ անոր նախնական՝ «անժամանակ, ուշ» նշանակութեամբ գործածութեան ալ կը հանդիպինք մեր ժողովրդեան քով. այսպէս օր. Խոյեցիք «Անգախ աքլոր» կը կոչեն «ժամ ու ժամանակ չձանաչող. անժամանակ բան խնդրողը» (Ամատունի. Բառ ու բան. էջ 30). նոյնպէս Վանայ և Խիւանի մէջ «Անգախ եկար» կը նշանակէ «ուշ, անյարմար ժամանակ եկար» (Աճառ. Գրու. Բառ. 95):

Աճառեան յիշեալ տեղոյն մէջ (էջ 95) կ'ընդունի «Անգահ» բառին Պրս. ծագումը, իսկ իր Արմատի. բառարանին Ա. հատորին մէջ (էջ 222) ոչ միայն կ'ընդունի զայն այլ և իրր վկայութիւն կը յիշատակէ Մխիթ. Հեր. «յանգահիլ» բայը. և սակայն զարմանալին այն է որ երբ կարգը կու գայ Դ. հատորին մէջ (էջ 1240) «յանգահացեալ» բային մեկնութեան, կը վարանի, և ինչպէս վերեւ տեսանք, «թուի ուղղելի անողացեալ»(!) կը գրէ²:

1. «Ապա թէ (երակն) մեղմ լինի եւ շատ խաղա... այտոր սուր ասեն» (անդ. էջ 16):

2. Աճառեանի այս սխալը պիտի փափաքէինք պատահական մոռացութեան վերագրել, բայց պակասը բուն հոտ չէ այլ արմատին վրայ. Աճառեան անգահ և յանգահիլ-ը մի միայն «անժամանակ, ուշ, ուշանալ» մեկ-

նեւը բառական կը համարի (ահա հոտ է իր սխալը), որով ոչ միայն Պիտոյից գրքին «յանգահացեալ» այլ և Մխիթ. Հեր. էն իր բերած վկայութիւններն իսկ անիմաստ կը մնան և կամ հակառակ իմաստ կ'առնեն: Առնենք, օր. Մխիթ. Հեր. էն յիշուած սա տողերը (էջ 26). «Եւ յորժամ ջերմն (հիւանդին) յանգահի ի բաղա-

5. ԱՀՈԿ. ԱՀՈԿԵԼ

Ահոկ կը նշանակէ «յանցանք, փնաս, պա- կասութիւն, մեղադրութիւն» որմէ Ահոկեյ «փնասել»։ Առաջին անգամ գործածուած է ըստ վկայութեան Հայկազ. բառ.ի վերջ- թանէս Գերթողէն (Է. դար), որմէ վերջը կու գայ մեր այս Հին բժշկարանի վկայու- թիւնը քանի որ բժշկարանս առաջ է Լամ- բրոնցիէն, Միսիթ. Հեր.էն և «Վաստա- կոց» զբքէն, որոնք նոյնպէս կը գործածեն այս բառը։

Ահոկ՝ ըստ մեկնութեան Պատկանեանի՝ (Marep. I, 8) յառաջացած է պահլա- ahok «Թերութիւն, մոլութիւն» բառէն. բուն և նախնական իմաստը կը ցուցնէ զենդեքէն ahita «անմաքուր, ապականեալ (որուն ժխտականն է an-ahita «մա- քուր, ամբիծ» որ և Անահիտ աստուածու- հին) ուսկից «հոգւոյ անմաքութիւն, մեղք, փնաս» (Հիւրբ. 95.-Աճառ Արմատ. Ա. 105)։

Ուրեմն մեր Անահիտը յիշեցնող այս Ահոկ բառին համար այսպէս կը գրէ Հին բժշկ.ը «... զի շատ յեմելն՝ տանի բաղ- նիքն զուժն զերակին և ահոկէ» (էջ 16). «ապա թէ տեսնիս որ (հիւանդին) ... աչքն խոռոջնա... և երեսն ավղնա (= նիհար- նայ) և թխնա և արձիգոյնի... մահու է. ապա թէ մարդ լուծուիմն ուննա և երեսն ավղնա չէ ահոկ և յորժամ հիւանդն ի քուն լինի և աչքն ի բաց մնա՝ մահու նշան է. և թէ տըռն լինի հիւանդն և աչքն ընդ այն որ խորանա՝ չէ ահոկ»

նիս մտէ» (էջ 26). Աճառեանի մեկնութեան համեմատ պիտի թարգմանենք «Էւ երբ (հիւանդին) ջերմը ուշա- նայ՝ բաղնիք մանէ», որմէ կամ իմաստ մը չ'եւելեր և կամ առ առաւելն այնպէս կ'իկնթադրուի երբ թէ Հերացի բժշկապետը հրամայած ըլլալ՝ Երբ հիւանդին ջերմը ուշանայ, ջերմ բերելու համար բաղնիք ընէ. ինչ որ հակասութիւն է. վասն զի այստեղ խօսքը բնական ջեր- մութեան (իմա՝ 36°, 5) վրայ չէ որ ուշացած՝ ետ մնացած ըլլալ և յառաջ բերելու համար բաղնիք ընել հարկա- ղորուի, այլ «վասն միօրեայ ջերմանն»՝ որով հիւանդը նոյն իսկ «նոսպայ» կ'ունենայ և որուն առջեւ առնելու համար խորհուրդ կը արուի «երակ առնել» և երբ, կ'ըսէ Հերացին, իր սորվեցուցած միջոցներով «ջերմն յանգա- հի»՝ ուրեմն ոչ թէ «ուշանայ» ինչպէս կը մեկնէ Աճառ-

(էջ 24)։ «Սունկն փնասակար է, չէ պարտ ուտել. թէ ուտես ահոկէ» (գրուած «վա- հոկէ») (էջ 94) են։

6. ՄՏԱՎԻԺԻԼ

«Եփ վախէ մարդ երակն փոխի և սրա- նա և եփ մտալովի՝ երակն թանձրանա և յիրար գա և եփ խնդա և յորդորի՝ երակն ուժովնա և լնվի» (էջ 17)։ Ինչպէս յայտ- նի է, բառս ձեւացած է միտք և վիժիլ բառերէն (հմտ. զահավիժիլ) և գործած- ուած է իբր մոտանոր. մոտարաի լինելը = «ցնդիլ» (մտքով)։

7. ԱԼ

Հին բժշկարանը պատահաբար գործա- ծեր է այս բառը, երակի զարկին մէկ տեսակը «ալոյ» նմանցնելով. տեսնենք թէ ինչ կը նշանակէ։

Թէպէտ Հայկազ. ունի «Ալ, ի (կամ Ալի, ալոյ) լիսեռն... ճախարակ... յն. ձալ», սակայն Զախըլս. իրաւամբ կը հաս- տատէ թէ լիսեռ նշանակող բառը «Ալի» (սեռ. ալոյ) է (հմտ. յն. ձալ) և ոչ թէ Ալ։ Ալիի ուղիղ է Առձեռն բառարանի Ալ բառին ներքեւ իբր ք. իմաստ գրածը (ա. իմաստը ուղղելի է Ալի) «Ալ... 2. խալլիկ. տճ. ալալիւնիւք» որ է երեսա- կայական չար ողի, նման ֆր. loup-ga- rou կամ իտալ. befana կոչուածին։ Ստուգարանորէն Ալ է Պրս. Եր բառը որ բուն կը նշանակէ «ախտ ինչ սատակիչ որ պատահէ կնոջ որ նորոգ ծնեալ իցէ

ռան, այլ ինչպէս կը գրէ նոյն ինքն Հերացին՝ «հառ- դարտի» («պարտ է երակ առնել որ տաքութիւնն պակ- սեցնէ... Ապա ջերմն հանդարտի» (Միսիթ. Հեր. անդ վարը), մեղմանայ կամ «պակսի» («Էւ երբ ջերմն պակսաի՝ ի բաղնիս մտէ» (անդ էջ 27). հմտ. զայս և վերի՝ «Էւ յորժամ ջերմն յանգաի ի բաղնիս մտէ»)։ Համեմատէ՝ զարձեալ թէ՛ Միսիթ. Հեր.ի և թէ Հին բժշկարանի վերեւ յիշատակուած վկայութիւնները, որոնց մէջ յանգառը «անժամանակ, ուշ» մեկնելով կարելի է իմաստ մը հանել. Հետեւաբար մեր կարծիքով Աճառեա- նի Արմատ. բառարանի Անգառ բառին «անժամանակ, ուշ» հոմանիշներուն քով աւելցնելու է նաեւ «հանգալտ, մեղմ» բառերը։

զմանուկ իւր» (Գէորգ զպ.). բայց ինչպէս ուրիշ ախտեր, այսպէս այս ալ ուսմիկն կողմանէ անձնաւորուած է իրրեւ չար ողի։ Ըստ այսմ Ալ կը գործածուի իբր «ծնեղակաւեկերոս քշնալի, այրանդակ կեր- պարանքով չար ողի մը»։ (հմտ. Հիւրբ. 262. Պատկ. Marep. II, 4. Աճառ. Ար- մատ. բառ. Ա. 43)։

Արդ մեր Հին բժշկարանը երակին յան- կարծակի աշխուժնալն և փութով մեղմա- նալը բացատրելու համար կ'ըսէ «Էւ թէ երակն ալոյ նման զայ՝ որ զայ անցնի՝ այդ այնում լինի եփ ի բաղնիք լինի մտել կամ զինի խմել» (էջ 18)։ Այս բառը նոյն իմաստով դեռ մեր ժողովրդեան մէջ եւս կը գործածուի. (Տես Աճառ. Գր. բառ. «ԱԼԵ», «Ալիպառա», «Ալայիմ» բառե- լը. հմտ. նաեւ Արմատ. բառ. Է. 75)։

8. ԶՄԱՍ

Այս բառը առաջին անգամ «Զրգողութիւն» (ֆր. hydropsie) կը մեկնէ Հ. Ալիշանը. որմէ վերջը նոյն իմաստով կը գործածեն զայն Նորայր (բառ. ֆր.-հայ.), Քաջունի (հատ. Գ. էջ 71), Աճառեան (Արմատ. Բ. 959). իսկ Կ. Յ. Բասմաջեան 1917ին նոր վկայութեամբ մը աւելի կը հաստա- տէ զայն. և թէպէտ նոյն ինքն Կ. Բաս- մաջեան վերջերս «Անգիտաց անպէտին» մէջ (էջ 708). «Զմագտ. Ophtalmie?» [= Աչացաւ] գրելով հրաժարիլ կը թուի իր նախկին ուղիղ մեկնութենէն, սակայն կը համարիմ թէ վերջին մեկնութիւնը վայրկեանական վրիպումի վերագրելու է։

1. Ռամկին մօտ սովորական է չար ախտերը չար ողոյ վերագրելը. այսպէս օր. M. N. Bouillet (Dict. des sciences etc.) Cauchemar «մղձաւանջ» հիւան- դութեան համար կը գրէ «... on imaginait que ce mal était causé par un démon incube ou éphialbe qui sautait et pesait sur la poitrine du dormeur...»։
2. «Զմաստ. ախտ ջրգողութեան. Թ. սըսգա, իսթիս- գա» (Գիրք վաստակոց, էջ 244)։
3. 1917-ի Բագմալեպին մէջ (էջ 102), Կ. Բասմա- ջեան բժշկարանի մը «Զմաստ և սակայ իսթիսգան է» բառերը կը մեկնէ «Anasarque [= ջրգողութիւն ընդ-

Այսու հանդերձ մեր մտքերէն ամէն կարելի տարակոյս պիտի փարատէ Հին բժշկ.ի հետեւեալ շահեկան՝ և ցարդ երեւ- ցածներու մէջ հնագոյն վկայութիւնը։ Բժշկարանս նախ պարզաբար կը յիշէ Զմաստ անունը. «Ապա թէ ի ցաւն ի ներս լինի այդ երակդ՝ այդ զմաստ լինի» (էջ 18). Բայց յետոյ զբքիս Գ. մասին մէջ առանձին զլիակարգութեամբ՝ ման- րամասն կը նկարագրէ զայն այսպէս. «Վասն սըսկաի որ է զմաստն. — Այս ցաւս որ կոչի զմաստ Գ. ցեղ է. ա.ին տապլ՝ (արբ. طبل «թմբուկ») ասեն. փորն մե- ծանա ու եր ի վերա զարկնեն տօպտօպաի ձայն ածէ. և ինքն քամի է։ ք. ին շահմի (արբ. شح «ճարպոտ») ասեն որ ամե- նայն անձն շատնա և մեծնա։ Գ.ին զըկի՝ (արբ. -قز «տիկ») ասեն որ ամենայն անձն զեղ տիկ լինի. և այտ զմաստտ անբժշկելի է»։ (էջ 341. Գ). և զարձեալ «Զմաստի՝ որ ոտը և ձեռք ուռչի և այլ մարմին» (էջ 342. Գ)։

Այս վկայութեանց մէջ թէ՛ «սըսկա» բառը և թէ ախտին նկարագրութիւնը յայտնի կը ցուցնեն թէ Հին բժշկարանի մէջ Զմաստ՝ ընդարձակ իմաստով գործա- ծուած է, իբր ֆր. hydropsie (ուրեմի ոչ իբր «ophtalmie» ինչպէս պատահ- մամբ սպրդեր էր Կ. Բասմաջեանի զրչէն)։

Բայց քանի որ hydropsie-ին համա- պատասխան «Զրգողութիւն» բառը ու- նինք և Ascite-ին՝ նախնեաց «Արժուիք» բառը յատկացուած է (Տես «Ascite» ի Քաջունի, Նորայր՝ բառ. ֆր.-հայ.), լա-ւագոյն պիտի ըլլայ եթէ Զմաստ բառն ալ

- հանուր], Ascite. [= ջրգողութիւն որովայնի]»։
4. Այս բառն է որ Քաջունին (հատ. Գ. էջ 233) Տապալ ձեւով կը գրէ. «Տապալ. ազգ զմաստ ախտի»։
5. Այս զըկի բառը Ամիրտովլաթի «Անգիտաց ան- պէտ»ին մէջ (Թ. 1805) մէկ անգամ գործածուած է «զելի» ձեւով, զոր Տ. Բասմաջեան (անդ էջ 708) hy- dropsie կը մեկնէ. իսկ Քաջունին (հատ. Գ. էջ 71) ascite կը մեկնէ «Զկի ախտ. Տես Արժուիք (ascite)»։ Եպիկուր արդէն (Ն. - Բ. 342) ἀσχυτός νόσος «տիկ հիւանդութիւն» կոչած էր այս ջրգողութիւնը որ բոլոր մարմինը կ'ուռեցնէ տիկ նման։

Ֆր. anasarque-ին յատկացնենք, փոխանակ արդի յերկրածոյ բառերու, ինչպէս օր. «Ջրիւր» (Քաջուր), «Ջրամորթութիւն» (Նորայր. բառ. ֆր-Հայ), «Ջրայտում» (Նուպար. բառ.) որոնք գրեցէ աւելի ֆր. œdème-ի մեր գաւառացիներուն «Ջրուռեց»ին յարմար են:

9. ՈՄԵԿ

Ոմեկ-լաւագոյն՝ Ոմեկ-բառին համար Հայկազ. այսպէս կը գրէ «Ոմեկ. բառ միւրն. որպէս թ. Իմէք. վաստակ, արդիւնք... և կամ որպէս հայ. ամորումն...» և դարձեալ «Ոմեկաւոր. վաստակաւոր...»:

Մինչդեռ բժշկարանիս վկայութիւններէն յայտնի է որ Ոմեկ «յոյս» կը նշանակէ: «Եւ թէ երակն քան զմկան ազի բարակ լինի՝ ուժն (հիւանդին) ի հատնել

է. ապա թէ քան զմկան ազի հաստ է՝ Ոմեկ կա հիւանդին» (էջ 18): Դարձեալ հիւանդին մէջը շիշի մը մէջ դնելով, կ'ըսէ, եթէ մըրը «յատակն իջնի՝ գիտացիր զի մահն մօտեցել է. և եր ի մէջն տեսնիս՝ ի մահու կէսն է եկել. և եր ի վեր լինի այդ նշանդ՝ գիտացիր զի ոմեկ ունի» (այսինքն ապրելու յոյս կայ)» (էջ 21): Դարձեալ կը գրէ «Եւ եփ զգոգն տեսնիս՝ գերակն ի հետ վկա կոչէ. եթէ կարուրային [= մէզ]՝ գոյնն վատ լինի և նշանքն և երակն աղեկ լինի և ուժով՝ զոմեկն կալ ապա թէ կարուրայն գէշ լինի և երակն վատուժ՝ չէ բարոյ նշան» (էջ 22):

Ստուգարանօրէն՝ ոմեկ որ և ումեկ, ումեկ², Պրս, اومك Իմիտ, «յոյս» բառն է (հմտ. Հայ. ումեկ, ումեկել, «յոյս, յուսադրել», և թրք. ումուտ, ումամք. «յոյս, յուսալ»): Այսպէս մեկնած է նաեւ Նորայր (Հայկազ. բառաքն. էջ 1-2):

Հ. Ս. ՖԵՐՈՆԵԱՆ

1. Տես յետոյ թ. 10.

2. Մեր գաւառացիներն ալ «յոյսի» իմաստով կը

գործածեն «ուօր» «ումեկ» «ումեա» բառերը (Տես Ար. մատ. բառ. Ե. 640, և Հայկ. բառաքն. էջ 2):

ԹԷ ՈՒՐ ԵՒ ԵՐԲ ՄԵՈԱԻ ՀԱՅՐ ԲԱՐԵՅԻՇԱՏԱԿ

Հ. ԵՂԻԱ ԹՈՎՄԱՃԱՆԻ

Կայ ի Դիւանի Նազարեթայ Եկեղեցւոյն Հայոց աստ ի Կալկաթա, տետրակ մի գրեալ յընթացս 1805-1807 ամացն, յորում, ի միջի այլոց, գտանի յիշատակարանս այս ընդ թուով 11 Նոյեմբերին, 1805 ամին.

«Լուքնահօրոց [Lucknoro] եղավ ստամբուլցի [կոստանդնուպոլսեցի] թոմաշանէնց Մահտեսի Ոհաննէսի որդի Մահտեսի Պարոն Արքահամ, հավատով և ասացիւր հայրն եւս կենդանի այ և բնակեալ է Միթիար Արքայ հօր վանքումն և քահանայ այ, և նմանապէս յիշեալ Պա-

րոն Արքահամիս որդի Եղեայ վարդապետն եւս նոյն վանքումն այ»:

Յետոյ նոյն յիշատակագիրն յաւելու և զայս թէ:

«Տիւրքամ որ վերոյիշեալ Արքահամ 1806, Օգոստոս 2, Շաբաթ օր, 7 սահաթին [ժամուն] հանգեալ ի Տէր, 56 ամ հասակի»:

1. Հակառակ անդուլ հետազոտութեանց, չկարացի գտանել զղիւր հանգստեան Արքահամի ի գերեզմանատուն կաթողիկոսաց:

ամի (1806) ի հասակի 85 ամաց, իսկ որդին, Հայր Եղիա թովմաճան, կնքեաց զմահկանացուն անդ ի վանս Սրբոյն Ղա. գարու, ի 23 Օգոստոսին, 1849 ամին, ի հասակի 71 ամաց, թողլով բազում կարեւոր երկասիրութիւնս և յոյժ շահեկան թարգմանութիւնս ի լեզու մեր ոսկեղէն:

Ինձ թուի թէ Մահտեսի Պարոն Արքահամ թոմաճեան եկեալ էր աստ ի Հընդիկա վաճառականութեամբ, լուեալ անշուշտ զմեծագանձ հարստութենէ հնդկաց աշխարհիս ի հօրէն, որ երբեմն եկեալն էր աստ սոյնպէս վաճառականութեամբ և այցելեալ զշահատանսն երկրիս, մի ըստ միջէ, զի գտանեմք զնա նախ ի Հայաշատն Սուրաթ (Surat), առաջին նաւահանգիստն Հնդկաստանի, և յետոյ ի Պունա (Poona), ի Հայդէրաբադ (Ayderabad), ի Մադրաս (Madras), ի Մայլափուր (Mylapore), ի Պոնդիչէրի (Pondicherry), ի Իրանկորաբ (Iranguebar) և ի Նէգապուտամ (Negaputam): Զընդարձակ ուղեւորութեանցն Հ. Յովհաննէս թովմաճանի յ'Եւրոպա, որպէս և յ'Ասիա և յ'Ափրիկէ, կայ գեղեցիկ և ընդարձակ յօդուած մի ի պատուական «Բազմավէպ» հանդիսիս վասն Յունիս-Սկստեմբեր ամսոցն 1937 ամին՝ (էջ 138-155) ի Հայր Եղիա փէշիկեանէ:

Զմոռանամ յիշել թէ ի քաղաքի աստ հանգեալ ի յոյսն բնակից՝ Ծոթեցիին Հայր Սուրբիս Վարդապետ Աղամալեանց, միաբան Միթիարեան ուրտին Վենետիկոյ, յ18 Մարտին, 1789, որպէս յիշատակեալ տեսանի ի տումարի արձանագրութեանցն, որք պահին ի վանս Կաթօլիկաց, և մարմին նորա ամփոփի ի նմին վանս, մեծաւ միջով և հանդիսիւ, թէպէտ և խնկելի շիւրիմ նորա, անհետացեալ է այլ եւս յընթացս անցեալ 150 ամաց:

Ի տումարին կայ հետագայ հակիրճ արձանագրութիւնն ի լեզու լուսիտանացւոց:

Re Pe. Soguias com accompnona Igreja Հանգիցէ ի խաղաղութեան Հ. Ս.):

Ի սրահի վանացս ամփոփեալ կայ և մարմին Կարապետի Մկրտիչ Մուրատի, եղբօր մեծի բարերարին ազգիս Սամուէլ Մուրատի, և ի մէջ եկեղեցւոյն կան փառաւոր շիրիմք Հայ ննջեցելոց, թուովք մետասան, մեծաւ մասամբ ի Շահրիմանեան պայազատ տոհմէն Նոր Զուլայի որք յընթացս 1734-1781 ամացն ննջեցին զնինջն յաւիտենից և զնացին հանգչել, յուսով յարութեան, յայնմիկ սրբավայրի, ուր կան շիրիմք Կաթօլիկ եպիսկոպոսաց և աղանաւոր անձանց:

Զտապանագիրսն ի հայ և ի լատին լեզուս հրատարակեցից ի մօտոյ յէջս պատուական «Բազմավէպ» հանդիսարանիս, ծանօթութեամբք հանդերձ, զի գտանին ի նոսին տապանագիրք երկուց ոսկեսիրտ եղբարցն Յովսէփայ և Զաքարիայի Բաղամ Շահրիմանեանց որք յամին 1784 մեկենաս և բարերար հանդիսացան բազմածախս տպագրութեան Հայր Միքայէլ Զամչեանի եռահատոր հսկայ և հոյակապ «Պատմութեանն Հայոց»:

Օրհնեալ եղիցին յիշատակը նախնի մեծագործ Հնդկահայոց, որք յառատ գանձուց իւրեանց և յարգար վաստակոց հանին մասն և բաժին յօգուտ և ի փառս ազգային անկեալ դպրութեան յընթացս ԺԹ դարուն, զի եթէ չլինէին Շահրիմանեան հարազատք, ո՞վ հոգայր արդեօք զծախս տպագրութեան Զամչեանի լիակատար պատմութեան, և եթէ չլինէին Ղարամեանք, լոյս ոչ տեսանէին բնաւ գեղեցիկ թարգմանութիւնքն Ռօլէնի «Հնախօսութեան» կամ «Հոովմէական Պատմութեան», ի ձեռն Միթիարեան ազգանուէր և մեղուաջան Հարցն Վենետիկեան փեթակին:

Ի Կալկաթայ Հնդկաց ՄԵՍՐՈՎԸ Յ. ՍԵՐՈՆԵԱՆ
ի 1 Յունուարի, 1938 Նոր Զուլայիցի